

**ԱՐՑԱԽԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՅ
ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԱՐԿԱՂԻ ԴՈՒԿԱՍԵԱՆ
Կ'ԱՅՑԵԼԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**

Այսու հոգեկան հրճուանքով կը հաղորդենք, թէ Արցախի նախկին Նախագահ՝ Մեծայարգ Տիար Արկաղի Դուկասեան եւ Տիկինը՝ Ինա, որ յատուկ առաքելութեամբ կը գտնուէին Լոս Անճելըս, Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Ս. Յովնան Արք. Տէրտէրեանի հրաւերով, Երեքշաբթի, Յունիս 22ին, 2010, կէսօրին այցելեցին Առաջնորդարան:

Պատուաժան Նախագահին կ'ընկերանային Լոս Անճելըսի մէջ պաշտօնավարող Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս՝ Տիար Գրիգոր Յովհաննիսեան, Արեւմտեան Ամերիկայի «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Նախագահ՝ Իրաւաբան Տիար Արա Ակիշեան եւ Հիմնադրամի պաշտօնեայ՝ Տիար Սարգիս Գոթանճեան:

Ժամանումէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայրը, Գերշ. Ս. Վաչէ Արք. Յովսէփեան եւ այս առիթով յատկապէս հրաւիրուած հիւրեր, սիրով դիմաւորեցին զիրենք եւ առաջնորդեցին դէպի Առաջնորդանիստ Մայր Տաճար, ուր Առաջնորդ Սրբազան Հայրը բացատրութիւններ տուաւ Մայր Եկեղեցւոյ կառուցման եւ կատարուած աշխատանքներու մասին, ուրախութեամբ յայտնելով, թէ զործերը ըստ ծրագրի կ'ընթանան եւ թէ շուտով պատրաստ պիտի ըլլայ օծման՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ:

Որմէ ետք բոլորը առաջնորդուեցան Առաջնորդարանի Արմէն եւ Նորա Համբար Դահլիճ, ուր տեղի ունեցաւ յատուկ ճաշկերոյթ, որու ընթացքին անականկալ կերպով նշուեցաւ նաեւ Պրն. Նախագահին ծննդեան 53րդ տարեդարձը:

Առաջնորդ Սրբազան Հայրը բարի գալուստ մաղթեց յարգարժան հիւրին եւ իր Տիկնոջ: Ուրախութեամբ յայտարարեց, որ Պրն. Դուկասեան չափազանց սիրուած է Արցախի, Հայաստանի եւ սփիւռքի զանազան համայնքներէն ներս՝ շնորհիւ իր կատարած ազգանուր ծառայութիւններուն եւ Արցախի հզօրացման եւ բարգաւաճման: Գոհունակութեամբ յայտարարեց, որ այս ճաշկերոյթը սիրով կը հիւրընկալէին Տոքթ. Արամայիս Պարոնեան եւ իր ազնուաշուք Տիկինը՝ Նաթելա Լաւաբէկեան Պարոնեան:

Հայաստանի եւ Արցախի մեծապէս օգտակար հանդիսացող Բարերար՝ Տիար Ալպէրթ Պոյաճեան, իր սրտի խօսքը ուղղեց, բարի գալուստ մաղթեց եւ անդրադարձաւ Նախագահի կատարած բազմաթիւ զոհողութիւններուն՝ Արցախի պաշտպանութեան եւ երկրի նախագահական բարձր պաշտօնը վարելով:

Արեւմտեան Ամերիկայի «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Նախագահ՝ Իրաւաբան Տիար Արա Ակիշեան շեշտեց, Պրն. Նախագահին ջանքերուն շնորհիւ արձանագրուած յաջողութիւնները՝ յայտնելով որ Ամերիկայի Արեւմտեան ափի հայութիւնը իր կողքին է եւ միշտ պատրաստ է օժանդակելու Արցախի մշակած ծրագիրներուն: Յատուկ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ այս գեղեցիկ առիթին համար:

Գլխաւոր Հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան խօսք առնելով ըսաւ, թէ յարգարժան Նախագահը քաղաքական բացառիկ գործիչ մըն է, որ անձնուէր ծառայութիւնը կը շարունակէ նոր նախագահի ընտրութենէն ետք իսկ: Երկար տարիներ բեղմնաւոր աշխատանք կատարած է քաղաքականութեան ասպարէզէն ներս եւ յատկապէս դժուարին բանակցութիւններ կը վարէ Արցախի ապահովութեան եւ խաղաղութեան, ինչպէս նաեւ Հայրենիք-Սփիւռք սերտ յարաբերութեան մէջ:

Սրբազան Հայրը հրաւիրեց Թեմական Խորհուրդի Փոխ Ատենապետ՝ Տիար Ռապրթ Պարսամը, փոխանցելու Թեմական Խորհուրդի անունով բարի գալուստի խօսքը:

Սրբազան Հօր հրաւերով խօսք առին Հալիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ եւ Հարաւային Գալիֆորնիայի Առաջնորդական Փոխանորդ՝ Արժ. Ս. Մանուկ Աւագ Քինյ. Մարգարեան, Իրաւաբան Տիար Ժողէֆ Կանիմեան, Տիկին Սափի Թիւֆէնքեան, որ յատկապէս անդրադարձաւ Տիկին Ինայի կատարած ազգանուր ծառայութիւններուն՝ ըլլան անոնք Լոս Անճելըսի եւ կամ այլուր, մեծապէս օգտակար հանդիսանալով մեր սիրելի որբերուն:

Պրն. Նախագահը իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, ինչպէս նաեւ մեծապէս գնահատեց Սրբազան Հօր ջանքերուն շնորհիւ Մայր Եկեղեցւոյ կառուցումը, որ հպարտութիւն է համայն հայութեան: Գոհունակութեամբ յայտնեց, թէ Լոս Անճելըսի հայութիւնը հայրենա-

սէր եւ հզօր համայնք մըն է, որ միշտ պատրաստ է օժանդակելու Հայրենիքի եւ Արցախի կարիքներուն:

Աւարտին, Սրբազան Հայրը դարձեալ իր շնորհաւորական եւ սիրոյ ջերմ խօսքերը ուղղեց Պրն. Նախագահին, յայտնելով թէ Առաջնորդարանը եւ Թեմիս հաւատացեալները միշտ թիկունք պիտի կանգնին Մայր Հայրենիքին եւ Արցախին: Ապա աղօթքով փակուեցաւ բացառիկ այս ընդունելութիւնը: